ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վարդենիս **28/02/2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 21 անդամներ:

Բացակա էին՝ Արուսյակ Ավետիսյանը, Արաքսյա Հայրապետյանը, Արտակ Մանուկյանը, Արամ Մելքոնյանը, Կարեն Սիմոնյանը, Սեվակ Սիմոնյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ահարոն Խաչատրյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կամո Զարոյանը

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N16-Ն որոշման 2-րդ գլխի դրույթներով և հիմք ընդունելով <<ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ>> ՍՊԸ ներկայացուցիչ Արայիկ Հակոբյանի 18 հունիսի 2024 թվականի դիմումը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի վարչական սահմաններում ընդգրկված Սոթք բնակավայրի 05-080-0254-0022 կադաստրային ծածկագրով Հայաստանի

Հանրապետության սեփականություն հանդիսացող /սեփականության իրավունքի վկայական՝ N 07012025-05-0019/ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված 0,90 հա հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն ստանալու համար դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ առաջարկելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի վարչական սահմաններում ընդգրկված Սոթք բնակավայրի 05-080-0254-0022 կադաստրային ծածկագրով Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող /սեփականության իրավունքի վկայական՝ N 07012025-05-0019/ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված 0,90 հա հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն ստանալու նպատակով դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին հետագայում կառուցապատման իրավունքով <<ԳեոՊրոմայնինգ Գոլդ>> ՍՊԸ-ին տրամադրելու համար:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 33-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՁՄԵՌԱՅԻՆ 2-ՐԴ ԽԱՂԵՐԻՆ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐԵՐԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ԵՎ ԿՈՇԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 47-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով, հաշվի առնելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. 2025 թվականի Համահայկական ձմեռային 2-րդ խաղերին Վարդենիս համայնքի սպորտային պարերի թվով 7 մարզիկների հագուստների և կոշիկների համար համայնքի բյուջեի սպորտմիջոցներ հոդվածից տրամադրել 320.000 /երեք հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ, որից՝ 210.000 /երկու հարյուր տաս հազար/ ՀՀ դրամը սպորտային պարային հագուստներ, իսկ 110.000 /մեկ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամը՝ սպորտային պարային կոշիկներ ձեռք բերելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ նախորդ նիստին ներկայացված չէր եղել 2025 թվականի Համահայկական ձմեռային 2-րդ խաղերին Վարդենիս համայնքի սպորտային պարերի թվով 7 մարզիկների հագուստների և կոշիկների համար ծախսված գումարը, ուստի առաջարկում եմ՝ համայնքի բյուջեի սպորտմիջոցներ հոդվածից տրամադրել 320.000 /երեք հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ, որից՝ 210.000 /երկու հարյուր տաս հազար/ ՀՀ դրամը սպորտային պարային հագուստներ, իսկ 110.000 /մեկ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամը՝ սպորտային պարային կոշիկներ ձեռք բերելու նպատակով:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 32-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 13-րդ հոդվածի 10-րդ մասի դրույթներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Համաձայնություն տալ Վարդենիս համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին:

2.Համաձայնություն տալ դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Վարդենիս համայնքի 2025 թ. բյուջեից առնվազ 20 %-ի չափով կատարել համապատասխան համաներդրումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ Գերմանական Միջազգային Համագործակցության Ընկերության կողմից գործադրվող Տեղական Զարգացման Հիմնադրամը հայտարարել է չորս ուղղություններով դրամաշնորհային մրցույթ.

1. Վերականգնվող էներգիա և էներգիաարդյունավետություն (ՎԷ/ԷԱ)
2. Համայնքային ծառայություններ
3. Տեղական տնտեսական զարգացում
4. Կանանց հզորացում և ներառականություն

Տեղական Զարգացման Հիմնադրամի ընդհանուր նպատակը մարզային համայնքներում սոցիալ-տնտեսական զարգացման խթանումն է:

Որպեսզի կարողանանք մշակել հայտեր և ներկայացնել Տեղական Զարգացման Հիմնադրամին անհրաժեշտ է համաձայնություն տալ ծրագրի մասնակցելու և ընտրվելու դեպքում 20% համաֆինանսավորման վերաբերյալ:

Առաջարկում եմ

1.Համաձայնություն տալ Վարդենիս համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին:

2.Համաձայնություն տալ դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Վարդենիս համայնքի 2025 թ. բյուջեից առնվազ 20 %-ի չափով կատարել համապատասխան համաներդրումը:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 31-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍՈՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի, ՀՀ կառավարության 04 օգոստոսի 2022 թվականի <<Համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվությանը ներկայացվող պահանջները և հաշվետվության ձևաչափը

հաստատելու մասին>> N 1198-Ն որոշման դրույթներով ու հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Վարդենիս համայնքի 2024 թվականի համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը առաջարկելով հաստատել Վարդենիս համայնքի 2024 թվականի համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվությունը՝ Վարդենիս համայնքի «Կախակն բնակավայրի 320գծմ հատվածի ասֆալտապատման», «Տրետուք բնակավայրի 160գծմ հատվածի ասֆալտապատման և ամենագնացի ձեռքբերման», «Սոթք բնակավայրի 580գծմ ոռոգման ներքին ցանցի կառուցման», «Կուտական բնակավայրի 449գծմ ոռոգման արտաքին ցանցի կառուցման», «Ծովակ բնակավայրի խմելու ջրի ջրագծի և կապտաժի կառուցման» և «Սոթք բնակավայրի 471գծմ հատվածի ասֆալտապատման» աշխատանքներ վերաբերյալ՝ համաձայն հավելվածի:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

20 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 30-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

Հաստատել՝ 2025 թվականի փետրվարի 28-ին ժամը 14:00-ին կայանալիք Վարդենիս համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը՝ բաղկացած 4 հարցից.

1.Համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվությունն հաստատելու մասին:
2.Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավորումն ապահովելուն համաձայնություն տալու մասին:

3.Համահայկական ձմեռային 2-րդ խաղերին Վարդենիս համայնքի սպորտային պարերի մարզիկների հագուստների և կոշիկների համար գումար տրամադրելու մասին:
4.Վարդենիս համայնքի վարչական սահմաններում ընդգրկված Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողատեսքը կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին:

2025թ. փետրվարի 28-ին ժամը 14:00-ին կայացավ Վարդենիս համայնքի ավագանու արտահերթ նիստը: Ավագանու 27 անդամներից նիստին ներկա էին 21-ը, բացակայում էին <<Քաղաքացիաան պայմանագիր խմբակցության>> ավագանու անդամներ Արամ Մելքոնյանը և Արտակ Մանուկյանը,Կարեն Սիմոնյանը, Սևակ Սիմոնյանը <<Միասնական Վարդենիս>> խմբակցության ավագանու անդամ Արաքսյա Հայրապետյանը, <<Ահարոն Խաչատրյան>> խմբակցության ավագանու անդամ Արուսյակ Ավետիսյանը: Նիստը իրավազոր է: Նիստը վարում է համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը:

Համայնքի ղեկավարը ընթերցեց օրակարգում ընդգրկված հարցերը՝ ըստ հերթականության, բաղկացած 4 հարցից:

Օրակարգը հաստատելու մասին հարցը դրվեց քվեարկության:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 29-Ա)*

Ավագանու անդամներ

ԱՐՄԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԲԱՋՈՅԱՆ

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԿ ԵՐԱՆՈՍՅԱՆ

ՄԵԼԱՆՅԱ ԵՓՐԵՄՅԱՆ

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ԽՉԵՅԱՆ

ՍՊԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՍԱԹԵՆԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՇԱԲՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԶԱՎԵՆ ՇՀՈՅԱՆ

ՌՈՄԵԼՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՋԵՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Կամո Զարոյանը _____